[Մուտքագրե՛ք ծրագրի շրջանակում գործող բնակարանային ապահովման մատակարարի անունը]

Ընտանեկան Բռնության, Ժամադրության Ընթացքում Բռնության, Բռնաբարության կամ Հետապնդման Զոհերի Անհապաղ (Արտակարգ Իրավիճակում) Տեղափոխության Ծրագրի Մոդել

Անհապաղ (Արտակարգ Իրավիճակում) Տեղափոխություններ՝

[Մուտքագրե՛ք ծրագրի շրջանակում գործող բնակարանային ապահովման մատակարարի անունը (HP հապավումը սույն ծրագրի մոդելի նպատակներով)] մտահոգված է իր բնակիչների անվտանգության հարցով, և նման անհանգստությունը տարածվում է այն բնակիչների հանդեպ, որոնք հանդիսանում են ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքի (Violence Against Women Act (“VAWA”))[1] համաձայն՝ HP-ն թույլատրում է, որպեսզի ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ

[1] Չնայած այդ օրենքի անվանմանը, VAWA-ի շրջանակներում պաշտպանության ապահովումը հասանելի է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության, կամ հետապնդման բոլորր զոհերին՝ անկախ սեռից, սեռային (գենդերային) ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից:

հետապնդման զոհերն անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն խնդրեն՝ բնակչի ներկայիս բնակեցման միավորից դեպի մեկ այլ միավոր: Տեղափոխություն խնդրելու հնարավորությունը հասանելի է՝ անկախ սեռից, սեռային (գենդերային) ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից:[2] Ներկայումս աջակցություն ստացող բնակիչներին HP–ի կողմից նման խնդրանքի շնորհման հնարավորությունն, այնուամենայնիվ, կարող է կախված լինել այն նախնական կողմնորոշումից, թե արդյոք բնակիչը հանդիսանում կամ հանդիսացել է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ, և թե արդյոք HP-ն ունի մեկ այլ բնակարանային միավոր, որը հասանելի և անվտանգ է՝ բնակչին ժամանակավոր կամ ավելի մշտական հիմունքով վարձակալությամբ առաջարկելու համար:

Տվյալ ծրագիրը բնորոշում է այն բնակիչներին, ովքեր ունեն անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասություն, այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն խնդրելու համար, գաղտնիության պաշտպանությունը, անհապաղ (արտակարգ իրավիճակում)

[2] Բնակարանային ապահովման մատակարարները չեն կարող խտրականություն սահմանել պաշտպանված բնութագրերի որևիցե մեկի հիմքով, այդ թվում են՝ ռասայական պատկանելիությունը, մաշկի գույնը, ազգային ծագումը, կրոնը, սեռը, ընտանեկան կարգավիճակը, հաշմանդամությունը կամ տարիքը: HUD-ի կողմից աջակցվող և HUD-ի կողմից տրամադրվող բնակարանային ապահովումը պետք է հասանելի լինի բոլորին՝ այլապես իրավասու անձանց, անկախ նրանց իրական կամ ընկալվող սեռական կողմնորոշումից, սեռային (գենդերային) ինքնությունից կամ ամուսնական կարգավիճակից:

տեղափոխության իրականացման եղանակները, և ապահովության ու անվտանգության վերաբերյալ բնակիչների ուղեցույցը: Տվյալ ծրագիրը հիմնված է արտակարգ իրավիճակում տեղափոխության ծրագրի մոդելի վրա, որը հրատարակվել է ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Նախարարության (HUD) կողմից և հանդիսանում է Դաշնային գործակալություն, որը վերահսկում է [**այստեղ մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության անունը**]-**ի** համապատասխանությունը VAWA պահանջներին:

Անհապաղ (Արտակարգ Իրավիճակում) Տեղափոխության Իրավասություն՝

Բնակիչը, ով հանդիսանում է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ՝ ելնելով HUD-ի կանոնակարգերի L ենթաբաժնի, 24 CFR Մաս 5-ի պահանջներից, ունի անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասություն՝ եթե բնակիչը խոհեմաբար հավատում է, որ իրեն սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե նա մնա իր ներկայիս տեղակայման վայրում: Եթե բնակիչը հանդիսանում է բռնաբարության զոհ, բնակիչը նույնպես կարող է տեղափոխության իրավասություն ունենալ, եթե բռնաբարությունը տեղի է ունեցել բնակության վայրում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ նախքան անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության պահանջի ներկայացումը: Անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն հայցող բնակիչը պետք է հստակորեն արտահայտի իր տեղափոխության պահանջը՝ սույն ծրագրում

նկարագրված ընթացակարգերի համաձայն: Բնակիչները, ովքեր բավականաչափ իրավունակ չեն, դեռևս կարող են անհապաղ տեղափոխություն հայցել, եթե նրանք համապատասխանում են տվյալ գլխի իրավասության պահանջներին:

Անհապաղ (Արտակարգ Իրավիճակում) Տեղափոխության Փաստաթղթերի Ձևակերպումը՝

Անհապաղ տեղափոխություն պահանջելու նպատակով, բնակիչը պետք է HP-ի կառավարման գրասենյակին ծանուցի տեղափոխության մասին և [**HP-ն պետք է մուտքագրի տեղակայման վայրը**] գրավոր հայց ներկայացնի: Տվյալ քաղաքականության շրջանակներում, HP–ն խոհեմ պայմաններ կտրամադրի հաշմանդամություն ունեցող անձանց: Բնակչի կողմից ներկայացված անհապաղ տեղափոխության գրավոր հայցը պետք է պարունակի ստորև նշվածներից որևէ մեկը.

1. Հայտարարություն, որտեղ արտահայտված կլինի այն, որ բնակիչը խոհեմաբար հավատում է, որ իրեն սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե բնակիչը ստիպված լինի մնալ HP-ի կողմից աջակցվող միևնույն բնակարանային միավորում: ԿԱՄ
2. Հայտարարություն առ այն, որ բնակիչը հանդիսացել է բռնաբարության զոհ, և որ բռնաբարությունը տեղի է ունեցել բնակության վայրում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ նախքան բնակչի կողմից անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության պահանջի ներկայացումը:

Գաղտնիություն՝

HP–ն գաղտնի կպահի ցանկացած տեղեկատվություն, որը բնակիչը տրամադրում է՝ անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության պահանջ ներկայացնելիս, ինչպես նաև անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության պահանջի վերաբերյալ տեղեկատվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բնակիչը HP-ին տալիս է գրավոր համաձայնություն՝ տեղեկատվությունը սահմանափակ ժամանակահատվածում հրապարակելու հիմքով, կամ եթե տեղեկատվության բացահայտումը պահանջվում է օրենքով, կամ պահանջվում է վտարման կամ գործող ծրագրի շրջանակում աջակցության դադարեցման դատավարության կամ լսման ընթացքում օգտագործելու համար: Դա ներառում է բնակչի նոր բնակարանային միավորման տեղակայման վայրի, եթե այդպիսին տրամադրվում է, գաղտնիության պահպանումը, այն անձից/անձանցից, ով բնակչի նկատմամբ կատարել է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման գործողություն: Ծանոթացե՛ք Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքի (Violence Against Women Act (VAWA)) շրջանակներում Վարձակալության Իրավունքների ծանուցմանը, ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքերին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու մասով HP-ի պատասխանատվությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Անհապաղ (Արտակարգ Իրավիճակում) Տեղափոխության ժամկետները և հասանելիությունը՝

HP-ն չի կարող երաշխավորել, որ տեղափոխության հայցը կհաստատվի կամ թե որքան ժամանակ կպահանջվի տեղափոխության հայցին ընթացք տալու համար: HP-ն, այնուամենայնիվ, գործում է հնարավորինս արագ, որպեսզի ապահովի ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհի տեղափոխումը մեկ ուրիշ միավոր, այդպիսի միավորի հասանելիության և անվտանգության պայմանով: Եթե բնակիչը խոհեմորեն հավատում է, որ առաջարկված տեղափոխությունը ապահով չի լինի, ապա բնակիչը կարող է տեղափոխություն խնդրել դեպի մեկ այլ միավոր: Եթե այդպիսի միավոր հասանելի է, ապա տեղափոխված բնակիչը պետք է համաձայնի հետևել այն պայմաններին և պահանջներին, որոնք կառավարում են այն միավորի վարձակալության գործընթացները, որտեղ որ տեղափոխվել է բնակիչը: HP-ն կարող է ի վիճակի չլինել տեղափոխելու բնակչին որևէ հատկանշական միավոր, եթե բնակիչը չի հաստատում կամ չի կարողանում հաստատել իր իրավասությունը տվյալ միավորի նկատմամբ:

Եթե HP-ն չունի անվտանգ և հասանելի բնակարանային միավոր, որի համար արտակարգ իրավիճակի կարիք ունեցող բնակիչը իրավասու է, ապա HP-ն կաջակցի բնակչին ուրիշ բնակարանային ապահովման մատակարարներ գտնելու հարցում, որոնք կարող են անվտանգ և հասանելի բնակարանային միավորներ ունենալ, որտեղ և կտեղափոխվի բնակիչը:

Բնակիչների Ապահովությունը և Անվտանգությունը՝

Ընթացիկ տեղափոխությունը և փաստացի տեղափոխությունն իրականացելիս, եթե այն հաստատված է և տեղի է ունեցել, բնակիչը պետք է ձեռնարկի բոլոր խոհեմ նախազգուշացումները, որպեսզի ապահովի իր անվտանգությունը:

Ընտանեկան բռնության զոհ հանդիսացող բնակիչներին խրախուսվում է զանգահարել Ընտանեկան Բռնության Ազգային Թեժ Գիծ (National Domestic Violence Hotline)՝ 1-800-799-7233 հեռախոսահամարով կամ դիմել ընտանեկան բռնությունից պաշտպանվելու տեղական ապաստարան՝ անվտանգության ծրագիր կազմելու համար օժանդակություն ստանալու նպատակով: Լսողության հետ խնդիրներ ունեցող անձանց համար նշված թեժ գիծը հասանելի կլինի՝ զանգահարելով 1-800-787-3224 (TTY) հեռախոսահամարով:

Բռնաբարության զոհ դարձած բնակիչները կարող են զանգահարել Բռնաբարության, Բռնի գործողություններին Անմեղների Ազգային Ցանցի Բռնաբարության Ազգային Թեժ Գիծ (Rape, Abuse & Incest National Network's National Sexual Assault Hotline)՝ 800-656-HOPE հեռախոսահամարով կամ այցելել առցանց թեժ գիծը՝ https://ohl.rainn.org/online/ կայքէջում:

Օգնություն փնտրող՝ հետապնդման զոհ դարձած բնակիչները կարող են այցելել Հետապնդման Հանցագործության Զոհերի Ազգային Կենտրոնի (National Center for Victims of Crime's Stalking Resource Center)՝ https://www.victimsofcrime.org/our-programs/stalking-resource-center կայքէջը:

Կից՝ Ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհերին աջակցություն առաջարկող տեղական կազմակերպությունների ցանկը: